«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2015 թվականի

Հեռակա ուսուցման բակալավրիատում կիսամյակի ընթացքում պարապմունքներին 25 տոկոսից ցածր հաճախումներ ունեցող և ամփոփիչ ստուգմանը չներկայացող ուսանողների հեռացման կարգ սահմանելու մասին

Լսելով և քննարկելով **«Հեռակա ուսուցման բակալավրիատում կիսամյակի ընթացքում պարապմունքներին 25 տոկոսից ցածր հաճախումներ ունեցող և ամփոփիչ ստուգմանը չներկայացող ուսանողների հեռացման կարգ սահմանելու մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հեռակա ուսուցման բակալավրիատում կիսամյակի ընթացքում պարապմունքներին 25 տոկոսից ցածր հաճախումներ ունեցող և ամփոփիչ ստուգմանը չներկայացող ուսանողներին, որպես կարգապահական խախտում կատարողների, հեռացնել՝ թույլ չտալով մասնակցել վերահանձնումներին:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին և Մ.Ն.Հարությունյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

05.02.2015 թ.